ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան « 23 » հունիսի 2023թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Անդրանիկ Աբգարյան՝ Դատական դեպարտամենտի Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ-շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Աիդա Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերում «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով (այսուհետ՝ նաև հրավեր) պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, ինչպես նաև Համակարգում առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի մուտքագրման (լրացման) մասին

1.1 Ստարտկոպի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1), ինչպես նաև 1-ին չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Ստարտկոպի ՍՊԸ-ի հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) նշված է, որ Ստարտկոպի ՍՊԸ-ն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Ստարտկոպի ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացվել է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի, որը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերի ՄԱՍ Ի-ի 4.3-րդ կետի 1)-ին ենթակետի «ե)» պարբերության պահանջների համաձայն, ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը ներկայացնում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի:

Ստարտկոպի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է (կցված չէ) մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթը (լիազորագիրը):

1.2 Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

1.3 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) են 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացրած հայտերի (հայտերում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 Ստարտկոպի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) կազմակերպության գործունեության հասցեն թերի է լրացված,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 3-րդ նախադասության մեջ նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 1-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվությունը. անհրաժեշտ է «1) բավարարում է ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերը փոխարինել «1) Ստարտկոպի ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և Ստարտկոպի ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում» բառերով,
- դիմում-հայտարարությունում (Հավելված N 1) «ղեկավարի պաշտոնը, ղեկավարի անուն ազգանունը» դաշտում նշված չէ ղեկավարի պաշտոնը,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևում (Հավելված N 1.3) բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը,
- 1-ին չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

2.2 Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,
- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին,
- մասնակցի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատած անձին՝ այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթղթում (լիազորագրում) նշված է այլ գնման ընթացակարգի ծածկագիր և այլ գնման առարկա:

2.3 ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա.

- դիմում-հայտարարության (Հավելված N 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակում նշված տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել, քանի որ հրավերով հիշյալ աղյուսակի լրացման պահանջ սահմանված չէ,

- դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը (Հավելված N 1.3) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար,

- 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ չափաբաժինների մասով Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

Նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2023թ. հունիսի 27-ին, ժամը 12:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ Ստարտկոպի ՍՊԸ-ի, Ալֆա-Էտալոն ՍՊԸ-ի հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հունիսի 26-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Անդրանիկ Աբգարյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Աիդա Հովհաննիսյան